ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԶԱՏԻ ՋՐԱՄԲԱՐԻ ՀԱՏԱԿԱՅԻՆ ՋՐԹՈՂԻ ԷԼ.ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԾՁԲ-18/5-1»

ք. Երևան «25» հոկտեմբեր 2018 թ.

ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Կ. Եփրեմյանի , որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ- ն, ի դեմս տնօրեն Խ.Այվազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ազատի ջրամբարի հատակային ջրթողի էլ.մոնտաժային աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների և N 1.1 հավելվածով սահմանված Ծավալների ամփոփագրի:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին և N 1.1 հավելվածով սահմանված Ծավալների ամփոփագրին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին և N 1.1 հավելվածով սահմանված Ծավալների ամփոփագրին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին և Ծավալների ամփոփագրին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **78650** (յոթանասունութ հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին 3 հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա	Արարատի մարզ, գ. Ուստա, Թեիլերյան 14
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ	«Արդշինբանկ» ՓԲԸ, Նոր- Նորք մ/ճ
Հ/Հ 2479000059160000, ՀՎՀՀ 00093621	h/h 2472401646050000,ՀՎՀՀ 04229504
Տնօրեն՝	Տնօրեն՝
---------- Կ. Եփրեմյան	---------- Հ. Այվազյան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված 1
« 25 » հոկտեմբեր 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը **
1	71351540/4	**Հատակային ջրթողի սարքավորումների էլեկտրամատակարարման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն:** Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում : Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պարբերաբար, պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի շինարարական աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան: Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են ` • ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը շինարարական և էլ.մոնտաժային նորմերին և անվտանգության տեխնիկայի կանոններին	դրամ	30000	1	ՀՀ Արարատի մարզի Լանջազատ համայնքի վարչական տարածք	Պայման ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև շինարարական աշխատանքների կատարման ավարտը

		• Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը, • վերահսկել և գնահատել շինարարական և էլ.մոնտաժային աշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի, • ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: • ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար, • կատարել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում, • գտնել շինարարության և էլ.մոնտաժման ժամանակ առաջացող խնդիրները և առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքները արագացնելու և աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար, • կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը, • շինմոնտաժային աշխատանքների ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը: • Պատվիրատուի ցուցումով չափագրել կատարման ենթակա աշխատանքները: • Աշխատանքների ողջ ընթացքում ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտներում հետևել նախագծային և կապալառու կազմակերպությունների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարմանը:					
2	71351540/5	**Ստորասրահի լուսավորության աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն:** Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից	դրամ	28900	1	ՀՀ Արարատի մարզի Լանջազատ համայնքի վարչական	Պայման ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև

		տրամադրվող պարտականությունների շրջանակներում : Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պարբերաբար, պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի շինարարական աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան: Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են ՝ • ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը շինարարական և էլ.մոնտաժային նորմերին և անվտանգության տեխնիկայի կանոններին • Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը, • վերահսկել և գնահատել շինարարական և էլ.մոնտաժային աշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի, • ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: • ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար, • կատարել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում, • գտնել շինարարության և էլ.մոնտաժման ժամանակ առաջացող խնդիրները և առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքները արագացնելու և աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար, • կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը, • շինմոնտաժային աշխատանքների ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով,				տարածք	շինարարական աշխատանքների կատարման ավարտը

		անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը: • Պատվիրատուի ցուցումով չափագրել կատարման ենթակա աշխատանքները: • Աշխատանքների ողջ ընթացքում ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտներում հետևել նախագծային և կապալառու կազմակերպությունների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարմանը:					
3	71351540/6	**Փականային շենքի լուսավորության աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն:** Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում : Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պարբերաբար, պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի շինարարական աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան: Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են՝ • ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը շինարարական և էլ.մոնտաժային նորմերին և անվտանգության տեխնիկայի կանոններին • Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը, • վերահսկել և գնահատել շինարարական և էլ.մոնտաժային աշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի, • ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար:	դրամ	19750	1	ՀՀ Արարատի մարզի Լանջազատ համայնքի վարչական տարածք	Պայման ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև շինարարական աշխատանքների կատարման ավարտը

		• ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար, • կատարել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում, • գտնել շինարարության և էլ.մոնտաժման ժամանակ առաջացող խնդիրները և առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքները արագացնելու և աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար, • կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը, • շինմոնտաժային աշխատանքների ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը: • Պատվիրատուի ցուցումով չափագրել կատարման ենթակա աշխատանքները: • Աշխատանքների ողջ ընթացքում ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտներում հետևել նախագծային և կապալառու կազմակերպությունների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարմանը:					

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
Հ/Հ 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրեն՝

----------Կ. Եփրեմյան
/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ
Արարատի մարզ, գ. Ոստան, Թեիլերյան 14
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նոր- Նորք մ/ճ
հ/հ 2472401646050000,ՀՎՀՀ 04229504
Տնօրեն՝

----------Խ. Այվազյան
/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 1.1
«25» հոկտեմբեր 2018թ. կնքված
«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԾՁԲ-18/5-1» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Աշխատանքների նկարագիրը	Չափ. միավ.	Քա-նակը
1	Հատակային ջրթողի սարքավորումների էլեկտրամատակարարում	Էլեկտրաշարժիչի միացում մինչև 5.2 կՎտ հզորութ. և 380Վ լարման ցանցին	հատ	4
		04կվ-ի բաշխիչ վահան՝ բաղկացած 2x25Ա և 2x16Ա հոսանքի եռաֆազ 380Վ լարման գծային և 1x125Ա մուտքի անջատիչներով, տեղադրում	հատ	1
		Սողնակի ղեկավարման արկղ 380Վ, 25Ա ավտոմատ անջատիչներով, դարձափոխ թողարկիչով, անջատիչներով, ղեկավարման կոճակներով, տեղադրում	հատ	1
		Սողնակի ղեկավարման արկղ 380Վ, 16Ա ավտոմատ անջատիչներով, դարձափոխ թողարկիչով, անջատիչներով, ղեկավարման կոճակներով տեղադրում	հատ	3
		Ղեկավարման կոճակների կետ ПКУ-15-21-131-54 տեղադրում	հատ	4
		Ուժային մալուխի АВВГ 660 5x4մմ^2 տեղադրում	մ	520
		Հսկող մալուխի АКВВГ 7x2.5մմ^2 տեղադրում	մ	30
		Հսկող մալուխի АКВВГ 14x2.5մմ^2 տեղադրում	մ	500
		Չոր մշակում մալուխի	հատ	18
		Չոր մշակում հսկող մալուխի	հատ	12
		Պողպատե խողովակ Φ50մմ տեղադրում	մ	30
		Մետաղաձեռնոց Φ20մմ տեղադրում	մ	10
		Հողանցման կոնտուր 25x4մմ, ցինկապատ շերտապողպատից, տեղադրում	մ	40
		Հենակ մալուխների համար К1150, տեղադրում	տ	0,16
		Մալուխային կախոց К341 տեսակի, տեղադրում	հատ	800
		Դյուբել մեխ К-413, տեղադրում	հատ	400
		Ղեկավարման արկղի ապամոնտաժ	հատ	5
		Մալուխի ապամոնտաժ	մ	1000
		Թերտային պողպատի ապամոնտաժ	տ	0,2
2	Ստորասրահի լուսավորություն	Հանքահորային լուսավորության տրանսֆորմատոր ТСШ-2.5/0.5Վ, լարումը 380/127, 2.5կՎԱ, տեղադրում	հատ	1
		Ավտոմատ անջատիչ շիթանթափանց բաց տեղադրման ВАО 04-36, տեղադրում	հատ	2
		Հանքահորային լուսատու պայթունաանվտանգ էկոնոմ լամպով , ЛСР(К)-1-36, 25Վտ, պաշտպանության դասը IP66, տեղադրում	հատ	22
		Մեկուսացված հաղորդալար АПВ 660 4մմ^2 տեղադրում	մ	760
		Մեկուսացված հաղորդալար АПВ 660 2.5մմ^2 տեղադրում	մ	40
		Մալուխ АВВГ 660 4x4մմ^2, ПВХ մեկուսացումով տեղադրում	մ	120
		Մալուխային ամրակ, մետաղական ցինկապատ տեղադրում	հատ	300
		Դյուբել մեխ տեղադրում	հատ	600
		Մեկուսիչ ժապավեն տեղադրում	կգ	1
		Միացման տուփ հերմետիկ տեղադրում	հատ	25
		Լուսատուի ապամոնտաժ	հատ	21
		Հաղորդալարի ապամոնտաժ	մ	700
		Մետաղապողպատի ապամոնտաժ	տ	0,2

3	Փականային շենքի լուսավորություն	Լուսավորության վահանակ 4x16Ա հոսանքի 220Վ լարման ավտոմատ անջատիչներով, տեղադրում	լրակ	1
		Լուսատու լուսադիոդային 34Վտ պատին ամրացվի, տեղադրում	հատ	8
		Լուսատու արտաքին պատի նատրիումային լամպով, ЖКУ-16-90, տեղադրում	հատ	3
		Լուսատու արտաքին պատի նատրիումային լամպով, ЖКУ-16-150, տեղադրում	հատ	15
		Երկբևեռ վարդակ հողանցման դանակով 6Ա, 220Վ, տեղադրում	հատ	1
		Անջատիչ միաբեռ, տեղադրում	հատ	3
		Նատրիումային լամպ, ДНаТ - 90Վտ, տեղադրում	հատ	3
		Նատրիումային լամպ, ДНаТ - 150Վտ, տեղադրում	հատ	15
		Լուսադիոդային լամպ, 34Վտ, տեղադրում	հատ	8
		Ուժային մալուխ ալյումինե ջիղերով АВВГ 660, 3x4մմ^2, տեղադրում	մ	20
		Ուժային մալուխ ալյումինե ջիղերով АВВГ 660, 3x2.5մմ^2, տեղադրում	մ	120
		Տուփ ճուղավորման КОР-73, տեղադրում	հատ	10
		Ф20x2.5մմ պողպատե խողովակի տեղադրում	մ	10
		Պլաստմասե վաք մեկ մալուխի համար, տեղադրում	հատ	40
		Մեկուսիչ ժապավեն տեղադրում	կգ	0,5
		Մալուխային ամրակ, մետաղական, տեղադրում	հատ	150
		Լուսատուի ապամոնտաժ	հատ	18
		Մալուխի ապամոնտաժ	մ	50

Ջրամբարը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Լանջազատ համայնքի վարչական տարածքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
Հ/Հ 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրեն՝

---------- Կ. Եփրեմյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ
Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նոր- Նորք մ/ճ
հ/հ 2472401646050000,ՀՎՀՀ 04229504
Տնօրեն՝

---------- Հ. Այվազյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«25» հոկտեմբեր 2018թ. կնքված
«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԾՁԲ-18/5-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/4	1-Տեխնիկական հսկողության ծառայություններ											30000	30000	30000
2	71351540/5	2-Տեխնիկական հսկողության ծառայություններ											28900	28900	28900
3	71351540/6	3-Տեխնիկական հսկողության ծառայություններ											19750	19750	19750

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
Հ/Հ 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրեն՝

----------Կ. Եփրեմյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ
Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նոր- Նորք մ/ճ
հ/հ 2472401646050000,ՀՎՀՀ 04229504
Տնօրեն՝

----------Խ. Այվազյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«25» 10 2018 թ. կնքված
«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԾՁԲ-18/5-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«25» 10 2018թ. կնքված
«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԾՁԲ-18/5-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն